

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՊԱՎԱԿԱՆ ԲԱՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ

Ժամանակակից հայերենի բառակազմությունը աչքի է ընկնում բացառիկ ճկունությամբ, բառակազմական միջոցների ու եղանակների բազմազանությամբ և բառակազմական միավորների, առանձնապես բաղադրական հիմքերի, բաղմատեսակությամբ: Այսպիսի հարստությունը պայմանավորված է ժամանակակից գրական հայերենի պատմական զարգացման յուրահատուկ բնույթով: Աշխարհաբարը գրական լեզու դարձնելու ժամանակաշրջանում մենք ունեինք մոտ մեկուկես հազարամյակի ընթացքում ճոխ ու բազմաբնույթ մատենագրության մեջ մշակված գրաբարը իր հարուստ բառապաշարով, որ, բնականաբար, իր հիմնական մասով ժառանգվում էր և անցնում դեռ նոր մշակվող գրական աշխարհաբարին, դառնում նրա բառապաշարի սեփականությունը: Մի քանի տասնյակ հազարի հասնող այդ բառերի մի զգալի մասն էին կազմում բաղադրյալ բառերը, որոնց յուրացումը նշանակում էր նաև բառակազմական միջոցների, կաղապարների ու բառակազմական միավորների յուրացում, ըստ որում դրանց մի զգալի մասը կենսունակորեն պահպանվել էր նաև աշխարհաբարում և բարբառներում, իսկ մի մասը, որ միայն գրաբարին էր հատուկ կամ նույնիսկ նախագրաբարյան հայերենին, վերստին կենսունակություն էր ստանում աշխարհաբար գրական լեզվում՝ ժառանգությաբար յուրացվող ու սեփական դարձող բառերի հետ (հիմտ. կյան-/կեն-, կենս-, կյաց-/կեց- բաղադրական հիմքերը կյանք, կենաբար, կենսախիճ, մեմակյաց, հանրակենցություն բառերում): Մյուս կողմից, գրական աշխարհաբարը հարստանում էր ժողովրդախոսակցական լեզվից ու բարբառներից՝ յոթնամյակ բառերով և, հասկանալի է, դրանց հատուկ բառակազմական կաղապարներով, միջոցներով ու միավորներով: Վերջապես, իր առաջացման և պատմական զարգացման ընթացքում աշխարհաբարը ստեղծել էր իր բառակազմական միջոցները, կաղապարներն ու միավորները, որոնց աղբյուրը թեև դարձյալ հին հայերենն էր, սակայն պատմական զարգացումով հանգել էր աշխարհաբարյան համակարգին և դարձել նոր որակ: Ահա բառակազմական այս տարբեր, բայց բոլորն էլ հայկական, համակարգերը միավորելով, համադրելով մեկ միասնական ամբողջության մեջ, գրական աշխարհաբարն ստեղծեց իր բառակազմական համակարգը, որ շատ ավելի ճկուն է, քան գրաբարինը, շատ ավելի մշակված, քան աշխարհաբար խոսակցական լեզվինը՝ իր տարածքային ժողովրդախոսակցական տարբերակներով հանդերձ, և, բնականաբար, շատ ավելի հարուստ, քան դրանցից յուրաքանչյուրինը: Այս համակարգի զարգացումով, ինչպես ներլեզվական, այնպես էլ արտալեզվական գործոնների թելադրանքով ժամանակի ընթացքում ժամանակակից հայերենն ստեղծեց բառակազմության նոր միջոցներ ու եղանակներ, որոնք

շկային (և չէին էլ կարող լինել) ո՛չ գրաբարում, ո՛չ էլ մինչգրական աշխարհաբարում: Այդպիսի միջոցներից են հապավումները:

Հապավումը բաղադրյալ անվանումների ու տերմինների կրճատված մասերի միավորումով բաղադրություններ կազմելու եղանակն է, ինչպես և՛ այդ եղանակով կազմված բաղադրությունները. օրինակ՝ ՍՄԿԿ (Սովետական Միության կոմունիստական կուսակցություն), ՀԱՄԿԽ (Հայաստանի արհեստակցական միությունների կենտրոնական խորհուրդ), Կենտկոմ (Կենտրոնական կոմիտե), կենտվարչություն (կենտրոնական վարչություն) և այլն: Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, ՍՄԿԿ, ՀԱՄԿԽ, Կենտկոմ, կենտվարչություն բառակերպ բաղադրությունները որոշակի բաղադրյալ անվանումների ղանազան կարգի կրճատումներով են կազմվել և ներկայացնում են այդ բաղադրյալ անվանումները:

Հապավումները մեծ զարգացում ստացան XX դ.: XIX դ. արդեն բավականաչափ տարածում էին ստացել տառային հապավումները, և հայագիտական գրականության մեջ սովորական գործածություն ունեին ու համընդհանուր ճանաչում էին ստացել այնպիսի հապավումներ, ինչպիսիք են, օրինակ. ՀԱ (ՔՀանդէս ամսօրեայ), ՀՀԲ (Հին Հայկազեան բառարան), ՆԶԲ (Նոր Հայկազեան բառարան), ԱԲ (Առձեռն բառարան), ԲԸ (բարեգործական ընկերություն) և այլն:

Ինչպես ուրիշ լեզուներում, այնպես էլ հայերենում, հապավումներն սկզբնապես առաջացել են համառոտագրությունների հիմքի վրա. նախապես գրում էին, օրինակ, Հ. Ա. (ՔՀանդէս ամսօրեայ), Ն. Դ. (Նոր դար) և այլն: Այդ նույն համառոտագրությունները հետագայում սկսեցին գրել առանց կետերի, որոնք կրճատման (համառոտագրության) նշանի կամ ցուցիչի դեր էին կատարում: Կետերի բացթողումն էլ, ահա, հանգեցրեց համառոտագրությունների նոր եղանակի՝ համառոտագրված բառերի սկզբնատառերի (կամ մասերի) միասին գրելուն, և դրանով իսկ առաջին քայլը կատարվեց հապավումների, իբրև յուրատեսակ համառոտագրության, զարգացման գործընթացում: Կապիտալիզմի զարգացումը, կապիտալիստական բազմաթիվ արդյունաբերական միավորումների, ընկերությունների, հասարակական կազմակերպությունների, իրազեկման աղբյուրների (թերթերի, հանդեսների, պարբերական ժողովածուների և այլնի) զարգացումը և դրա հետ կապված՝ բազմաթիվ բաղադրյալ անվանումների երևան գալը հղոր խթան հանդիսացան հապավումների ծավալման ու զարգացման համար: Եվ բոլորովին էլ զարմանալի չէ, որ ֆրանսերենում, անգլերենում, գերմաներենում և շատ այլ լեզուներում այժմ էլ գերակշռում են թերթերի, հանդեսների, արդյունաբերական ձեռնարկությունների, ընկերությունների, զանազան կոնցեռնների և նման միավորումների բաղադրյալ անվանումների, ինչպես և՛ միջազգային կազմակերպությունների և ընկերությունների բաղադրյալ անվանումների հապավումները (հմտ. Ֆիֆա, Ֆիդե, Ուեֆա, Յունեսկո և այլն): Սովետական Միության ժողովուրդների լեզուներում, և առաջին հերթին ռուսերենում, հապավումների բուռն զարգացումը որոշակիորեն տարբերվում է ինչպես հասարակական-քաղաքական գործոնների, այնպես էլ բուն իսկ հապավումների բնույթով: Սովետական իշխանությունը կյանքի կոչեց պետական կառավարման նոր մարմիններ, ստեղծեց հասարակական-քաղաքական ու տնտեսական նոր հարաբերություններ: Ինքնին հասկանալի է, որ կառավարման նոր մարմինները,

տնտեսական քաղաքականության մեջ երևան եկած նոր երևույթներն ստացան իրենց անվանումները, որոնք մեծ մասամբ բաղադրյալ անուններ էին: Հասարակական տեսակետից այդ նոր մարմինների և կազմակերպությունների առանձնահատկություններից մեկն այն էր, որ դրանք իրենց ամենօրյա գործունեությամբ սերտ շփման մեջ էին աշխատավորական հոծ զանգվածների հետ, որ և պայմանավորում էր դրանց անվանումների անմիջական մասնալականացումը և այդ անվանումների ամենօրյա դործածությունը ժողովրդական ամենալայն խավերի առօրյա հաղորդակցման մեջ: Այս հանգամանքը հասարակական հիմքը հանդիսացավ այն բանի, որ բազմաթիվ պետական ու կուսակցական մարմինների անվանումներ զանազան կարգի հապաված ձևերով գրվեին: Սա նշանակում է, թե ինչպես եվրոպական շատ լեզուներում, այնպես էլ ռուսերենում և Սովետական Միության մյուս ժողովուրդների լեզուներում թե՛ մինչև սովետական կարգերի հաստատումը, թե՛ դրանից հետո, հապավումները, իբրև համառոտագրությունների նոր եղանակ, հանդես են եկել նախ և առաջ գրավոր ձևով, գրական լեզուների մեջ: Սակայն հենց այն պատճառով, որ նորաստեղծ սովետական իշխանության այդ մարմիններն իրենց ամենօրյա գործունեությամբ սերտորեն կապված էին ժողովրդի ամենալայն խավերի հետ, ավելին՝ իրենց ամենօրյա գործունեության մեջ էին ներգրավում և ներգրավում են աշխատավոր ժողովրդի հոծ զանգվածներին, գրավոր ձևով առաջ եկած հապավումներն անմիջապես անցնում էին և անցնում են բանավոր խոսքին, դառնում ժողովրդական լայն զանգվածների առօրյա խոսքում գործածվող հապաված բառեր: Այս տեսակետից բոլորովին էլ զարմանալի չէ, որ ինչպես ռուսերենում, այնպես էլ հայերենում և ՍՍՀՄ մյուս ժողովուրդների լեզուներում սովետական իշխանության հաստատման հենց առաջին տարիներին և դեռ դրանից էլ առաջ, հեղափոխության ու քաղաքացիական պատերազմների տարիներին, խոսակցական լեզվի մեջ արդեն սովորական գործածություն ունեին բազմաթիվ հապավումներ (հմտ, դինկում, հեղկում, ռազմհեղկում, կադետ, էսէտ և այլն): Քսանական թվականներին հայերենում, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքում արդեն շատ սովորական գործածություն ունեին, բերված օրինակներից բացի, բաճկում, բառակկում, լիկկայան, գլուղկոպ, շրջկոպ, բաճկոպ, ՓՕԴ, հոդոգկում, ժողկոմատ, ժողկոմ (բոլոր ժողկոմատների ու ժողկոմների ճյուղային հապավումներով հանդերձ, ինչպես՝ հոդժողկոմ, լուսժողկոմ, հոդժողկոմատ, լուսժողկոմատ և այլն), Կեճտկում, կեճտգործկում և այլն: Մեր կյանքի բուռն զարգացումը, սովետական ժողովուրդների տնտեսական, գիտատեխնիկական ու մշակութային աննախընթաց վերելքը հզոր գործոն հանդիսացան հապավումների ծավալման ու բազմացման համար: Երեսնական թվականներին հապավումներով կազմված բաղադրություններն այնպիսի չափերի էին հասել, որ հապավումների, որպես բաղադրությունների նոր, բայց լիովին կենսունակ ու արդյունավետ եղանակի վրա հատուկ ուշադրություն դարձնելու անհրաժեշտություն զգացվեց: Այն, ինչ որ մինչև սովետական իշխանության հաստատումը դեռևս ռարկ չէր կազմում լեզվի մեջ և այդ պատճառով էլ կարող էր դիտվել իբրև սովորական համառոտագրությունների մի տեսակը, մանավանդ որ եղած փոքրաթիվ հապավումները սոսկ գրավոր խոսքում էին գործածվում և զուրկ էին մասսայականությունից (ինչպես և առհասարակ գրականությունն ու մամուլը), սովետական իշխանության հաստատումից հե-

տո զարգացման մեծ թափ ստացավ ու հանդես եկավ որպես նոր որակ, լեզվի մեջ իր հաստատուն տեղն ու դերը նվաճած երևույթ։ Եվ բոլորովին պատահական չէ, որ արդեն 1934 թ. միջնակարգ դպրոցի հայոց լեզվի քերականության նոր դասագրքի հեղինակ Ա. Ղարիբյանը «Բառակաղմթյուն» բաժնում «Նորագույն հայավումներ» վերնագրի տակ անհրաժեշտ դիալեկտներ է տալիս հայավումների ու դրանց տեսակների մասին¹, իսկ հետագայում Գ. Սևակը հատուկ ուսումնասիրության առարկա է դարձնում ժամանակակից հայերենի հայավումները²։

Հայավումների էլ ավելի բուռն զարգացման շրջանը կապվում է գիտատեսխիկական հեղափոխության հետ. գիտության ու տեսխիկայի առաջընթացը և որակական թոփառ, տեսխիկայի, արտագրության և գիտության նոր ճյուղերի ու միջճյուղերի առաջացումը նոր թափ հաղորդեցին բաղմամբով բնագավառների տերմինահամակարգերի զարգացմանը, իսկ դա էլ, իր հերթին, հայավումների վիթխարի բաղմացմանը։ Այժմ ստեղծվել է ալիպիսի վիճակ, որ ոչ միայն անհրաժեշտ է դարձել տարբեր լեզուների, այդ թվում և հայերենի, հայավական բաղադրությունների ընդհանուր բառարանների կազմությանն ու հրատարակությանը, այլև ճյուղային բառարաններում (տերմինաբանական բառարաններ, տերմինարաններ, բառացանկեր և այլն) զետեղելու տվյալ բնագավառի հայավական բաղադրությունները, որոնց մեծ մասը չի կարող մուծվել ընդհանուր բառարանների մեջ։

Ալիպիսով, հայավումը, որպես յուրահատուկ տիպի բառային բաղադրությունների եղանակ, նոր երևույթ է և իբրև ալիպիսին կապվում է XX դ. հետ, թեև XIX դ. էլ նա, ինչպես ասացինք, արդեն սկզբնավորվել էր իբրև համառոտագրության մի նոր տեսակ։ Հայերենում, ինչպես և ռուսերենում ու Սովետական Միության մյուս ազգային լեզուներում, հայավումը իր իսկական զարգացումն է ստանում սովետական կարգերի հաստատումից հետո։

Ինչպես ասվեց, հայավումը հանդես է եկել ու զարգացել համառոտագրությունների հիմքի վրա։ Համառոտագրությունները հին դարերից են գալիս. հայերենում գործածվել են համառոտագրությունների տարբեր տեսակներ։ Այդ տեսակներից հնում ամենատարածվածն ու սովորականն է եղել պատվագրությունը, մասամբ նաև «սյուն» և «երկվորյակ» նշաններով գրությունը³, որոնք XIX դ. երկրորդ կեսում գուրս մղվեցին տպագիր խոսքից, իսկ

¹ Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի քերականություն, Երևան, 1934։ Մեր ձեռքի տակ է նույնի 1935 թ. հրատարակությունը, որի 21—22 էջերը նվիրված են հայավումներին։

² Գ. Սևակ, Նորագույն հայավումները հայերենում (ՀՍՍՄ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1947, № 5, էջ 55—67), նույնի՝ Հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 182—198։ Հետագայում հայավումներն ուսումնասիրել են՝ Ս. Ա. Էլոյան, Հայավումներ («Հայոց լեզվի զարգացումը», ժողովածու, Երևան, 1973, էջ 123—148), Ա. Մարգարյան, Հայերենի հայավումները և նրանց առանձնահատկությունները («Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 3, էջ 80—96), նույնի՝ Խոսաց լեզուն և հայերեն հայավումները (ՀՍՍՀ ԳԱ «Երաբեր», 1978, № 2, էջ 34—48)։

³ Պատվագրությունը բառերի կրճատ գրությունն էր պատիվ կոչված նշանով, որ դրվում էր տառի վրա (օրինակ՝ ՏՐ=տէր, ած=աստուած, քաջութ. = քաջութիւն և այլն)։ Սյուն կոչվում էր այժմյան շնչափ նման նշանը, որ դրվում էր բաց թողնվող ա տառի փոխարեն (օրինակ՝ խղղ=խաղաղ, ժմնկ=ժամանակ և այլն)։ Երկվորյակ կամ երկնասյուն էր կոչվում այժմյան չափերափ նման նշանը, որ դրվում էր բաց թողնվող ձայնավորի տեղը՝ նախորդող բաղաձայնանիշ տառի աջ կողմը՝ վերևից (օրինակ՝ խ''ն''ըհ''թիւն=խոնարհութիւն, բ''ր''մբ=բերեմբ և այլն)։

XX դ.՝ նաև ձևազրկի գրվածքներից: Բուն համառոտագրությունը, այսպիսով, դարձավ բառերի (հատուկ և հասարակ անունների) կրճատ գրության ընդհանուր անվանում, ըստ որում, թեև բառերի կրճատման եղանակները տարբեր էին ու բազմազան (սկզբնատառային, երկտառ, բաղմատառ, վանկային և այլն, ինչպես՝ թ. = թվական, թիվ, պր. = պարոն, օր. = օրիորդ, Հովհ. = Հովհաննես, Ժմնկ. = Ժամանակ և այլն), բայց բոլորն էլ ունեին մեկ ընդհանուր հատկանիշ. բոլոր կարգի կրճատումներն էլ գրավոր խոսքում գրվում էին կետով, որպես կրճատման նշանով, իսկ կարգալիս արտասանվում էր համապատասխան բառն ամբողջությամբ, ինչպես որ այժմ է (հմմտ. բնկ. = բնկեր, թ. = թվական և այլն): Դարի վերջում սկիզբ առավ հայավական գրությունը, որպես դարձյալ համառոտագրության տեսակ. գրա առանձնահատկությունն այն էր, որ համառոտագրվում էին բաղադրյալ անունների բաղադրիչները, ըստ որում այդ դեպքում այլևս կետ չէր գրվում, որի հետևանքով հայավված բաղադրիչներն էլ չէին անջատվում միմյանցից, այլ գրվում էին միահար, ինչպես՝ ՀԱ, ՆՀԲ, և այլն: Այդ հայավումները նույնպես սովորաբար կարդացվում էին լրիվ բառերով, բայց առանձին դեպքերում՝ նաև տառերի անվանումներով (ինչպես, ասենք, ՆՀԲ արտասանելիք ՆՈՒՀՈՐԵՆՆ⁴): Այս կարգի համառոտագրություններն էին, որ հայավումների ու հայավական բաղադրությունների անմիջական հիմքը հանդիսացան, որոնց միացան նաև վանկային համառոտագրությունները՝ բաղադրյալ անվանումների կրճատման համար: Եվ սա է, որ թույլ է տալիս ասելու, թե հայավումներն առհասարակ առաջացել են համառոտագրությունների հիմքի վրա: Ծագած լինելով համառոտագրություններից, հայավումները զարգացան դեպի առանձնահատուկ կրճատ գրություն բաղադրյալ անվանումների և հանդես եկան ոչ միայն որպես համառոտագրության յուրահատուկ տիպ, այլև բառակազմական հատուկ եղանակ և բաղադրությունների ինքնատիպ տեսակ: Համառոտագրությունների և հայավական բաղադրությունների հիմնական տարբերությունները հետևյալներն են:

1) Համառոտագրվել կարող են ոչ միայն բառակապակցություններ, բաղադրյալ անուններ ու տերմիններ, հատուկ անուններ (հմմտ. նախկին՝ Կ. Բ. = Կարմիր բանակ, Հ. Ս. Խ. Հ. = Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, ուղ. հ. կամ ուղ. հոլ./հլ. = ուղղական հոլով, Հ. Թ. = Հովհաննես Թումանյան, հյց. հլ. = հայցական հոլով և այլն), այլև առանձին բառեր, ինչպես՝ թ. = թվական, Ժ. = Ժամ, բնկ. = բնկեր, ուս. = ուսանող, քաղ. = քաղաքացի և այլն, մինչդեռ հայավումները, ինչպիսին էլ լինեն, պետք է բաղկացած լինեն առնվազն երկու բաղադրիչից:

2) Համառոտագրվող բառերը, իբրև կանոն, կարդացվում են ամբողջությամբ, առանց կրճատման, մինչդեռ հայավումների վանկային հայավությունները, շատ հաճախ նաև ամենատարածված տառային հայավությունները, թե՛ գրավոր խոսքը կարդալիս, և թե՛ բանավոր խոսքում արտասանվում են հայավված ձևով:

⁴ Հմմտ. ՀՅԴ «հո-հյուն-դա» («հայ յեղափոխական դաշնակցութիւն»), բրի բաղադրիչների փոխառնություններ և ոչ ոչ հնչյունափոխությամբ Ե. Չարենցն իր «Մահվան տեսիլում» ստեղծեց իրականում շատ արտահայտիչ բանաստեղծական բացականչությունը:

3) Համառոտագրությունների մեջ բաղադրությունների համառոտագրվող մասերը սովորաբար գրվում են առանձին-առանձին՝ կրճատման նշան հանդիսացող կետով⁵, մինչդեռ հապավումների բաղադրիչները գրվում են միասին՝ առանց կետերի:

Այդ բոլոր յուրահատկություններից էլ առաջացել է հապավումների ամենակարևոր հատկանիշը և համառոտագրություններից ունեցած նրա գլխավոր տարբերությունը՝

4) Համառոտագրություններով բառեր չեն կազմվում, մինչդեռ հապավումներով կազմվում են առանձնահատուկ տիպի բաղադրյալ բառեր:

Հապավական բաղադրությունները տարբեր տեսակներ են ներկայացնում ինչպես իրենց բաղադրիչների բնույթով, այնպես էլ դրանցով բաղադրվող բառային միավորներով: ՀՄՍՀ և կուսկոմ հապավական բաղադրություններ են, որոնք կազմվել են Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն և կուսակցական կոմիտե բաղադրյալ անվանումների բաղադրիչների կրճատված մասերով, ըստ որում առաջինը կազմվել է բաղադրիչների սկզբնատառերով, իսկ երկրորդը՝ բաղադրիչների բառամասերով: Թե՛ առաջինում, և թե՛ երկրորդում հապավական բաղադրությունների բաղադրիչները կրճատված, հապավված բառերի մասեր են: Բառերի հապավված մասերը, որոնցով կազմվում են հապավական բաղադրություններ, կոչում ենք հապավույթներ: Բերված օրինակների մեջ Հ, Ս, Ս, Հ, կուս, կոմ բաղադրիչները հապավույթներ են: Հայերենի հապավույթները լինում են երեք տեսակ՝ ա) սկզբնատառային կամ պարզապես՝ տառային, բ) բառամասային կամ վանկային, գ) հատվածական:

Տառային հապավույթները հապավվող բառերի սկզբնատառերն են, ինչպես՝ Մ(ոսկետական) Մ(իություն) Կ(ոմունիստական) Կ(ուսակցություն)—ՄՄԿԿ, է(եկտրոնային) հ(աշվիչ) մ(եքենա)—էհմ, բ(արձրագույն) ու(սումնական) հ(աստատություն)—բուհ, Մ(իավորված) Ա(զգերի) Կ(ազմակերպություն)—ՄԱԿ և այլն:

Բառամասային կամ վանկային հապավույթները բառերի սկզբնամասերն են, որոնք կազմում են մեկ, քիչ դեպքերում՝ երկու վանկ, ինչպես՝ դին(վորական) կոմ(իսար)—զինկոմ, քաղ(աքական) դեկ(ավար)—քաղդեկ, կոմ(ունիստական) երիտ(ասարդական)+միություն—կոմերիտմիություն, ժող(ովրդական) կրթ(ություն) բաժ(նի) վար(իչ)—ժողկրթբաժնավար և այլն: Վանկային հապավույթները անխտիր փակ վանկեր են կազմում⁶, իսկ դա հանգեցնում է բառերի սկզբնավանկերի և վանկային հապավույթների հետևյալ հարաբերակցություններին:

⁵ Նստ լեզուներում (օրինակ՝ ֆրանսերենում, գերմաներենում և այլն) տառային հապավումները գրվում են և առանց կետերի, և կետերով՝ իրարից անջատված (օրինակ ֆրանսերեն՝ F.I.F.A և F.I.F.A.) և առայժմ դրանք հավասարապես ընդունելի են համարվում: Բոլոր լեզուներում ընդունված է շարվածների զանազան միավորների համառոտագրությունները գրել առանց կետերի, ինչպես՝ կզ (կիլոգրամ), մ (մետր), ժ (ժամ), կվմ (կիլովատ ժամ), կմ (կիլոմետր), գր (գրամ) և այլն:

⁶ Բառ շփանկով հապավույթներ կարող են ունենալ միայն փոխառյալ բառերը, ինչպես՝ դիմատ (դիսկոնիկական մատերիալիզմ), բիբֆակ (բիոլոգիական ֆակուլտետ) և այլն: Դրանց մասին տես ստորև՝ փոխառություններին նվիրված հատվածում:

Ա) Վանկային հապավույթները համընկնում են հապավվող բառի առաջին վանկին, եթե դա փակ վանկ է, ինչպես՝ տեխ-(նի-կական), հապավույթը՝ տեխ (տեխնիկական), կենտ-րոնական՝ կենտ (կենտրոն), բան-վորական՝ բան (բանավան), արդ-յունաբերական—արդ (տեղարդ), զին-վորական՝ զին (զինկում), և այլն:

Բ) Այն դեպքերում, երբ հապավվող բառի փակ վանկը վերջանում է որևէ ձայնորդով կամ շփական բաղաձայնով, հապավույթը հավասար է լինում առաջին վանկին+անմիջապես հաջորդող բաղաձայնը (երկրորդ վանկի առաջին բաղաձայնը), այն պայմանով, սակայն, որ ստացված բաղաձայնական հնչյունակապակցությունը համապատասխանի հայերենի վանկավերջի հնարավոր բաղաձայնական կապակցություններին, ինչպես՝ աշ-խատանքային—աշխ (աշխուհերվներ), տըն-տեսական—տնտ (տնտմաս), կըր-թություն—կրթ (ժողկրթբաժին), վար-կային—վարկ (վարկ-ընկերություն), ար-հեստակցական—արհ (արհկում), գործադիր—գործ (գործկում), կազ-մակերպչական—կազմ (կազմկոմիտե), ռազ-մական—ռազմ (ռազմհեղկում), հաշ-մանդամներ—հաշմ (հաշմկոոպ), շըր-ջանային—շրջ (շրջկում), ար-տաքին—արտ (արտ-գործմիևսարություն) և այլն:

Այս կանոնից շեղվում են բան—(բանվորական) և զին (զինվորական) հապավույթները, որոնք կազմվել են առաջին կետի համաձայն, այն պարզ պատճառով, որ հայերենում -նվ հնչյունակապակցությամբ ավարտվող վանկ չի կարող լինել:

Գ) Եթե հապավվող բառի սկզբնավանկը բաց վանկ է, ապա վանկային հապավույթը հավասար է առաջին վանկին+հաջորդ բաղաձայնը (երկրորդ վանկի առաջին բաղաձայնը), ինչպես՝ կո-միտե—կոմ (արհկում), քա-ղաքային—քաղ (քաղկում), ճա-նապարհային—ճան (ճանշինվարչություն), ժո-ղովրդական—ժող (ժողդատարան), պե-տական—պետ (պետհամալսարան), կու-սակցական—կուս (կուսկում), կո-մունիստական—կոմ (կոմկուս) և այլն:

Երկու վանկ կազմող բառամասային (վանկային) հապավույթները շատ քիչ են և դրանք էլ կազմվում են նույն կանոնների համաձայն, ինչպես՝ սպա-ռողական—սպառ (սպառկոոպ), ե-րի-տա-սարդական—երիտ (կոմերիտական), խը-նայողական—խնայ (խնայդրամարկդ), հը-րա-տարակչություն—հրատ (պետհրատ), երկ-րա-մասային—երկր (արտասանվում է երկըր. երկըր-կում) և այլն:

Այս բոլորից առանձին են մնում արդդատ (արդդատմին), գյուղտնտ (գյուղ-տնտեսիկում—գյուղատնտեսության արտադրատեխնիկական ապահովման պետական կոմիտե) և կոմաա (զինկոմատ) հապավույթները: Առաջինը խոստովանություն է բառի հապավույթն է, որ ներկայացնում է բարդության բաղադրիչների (արդար-ա-դատ-ություն) հապավույթների միավորումը, թեև առաջին բաղադրիչը, որպես անկախ բառ, հապավական բաղադրությունների մեջ չի հանդիպում (երկրորդի համար, որպես նախատիպ, ունենք դատկոլե-գիա, դատատյան, դատգործ և այլ հապավական բաղադրությունների դառն բաղադրիչը, որ, սակայն, դատական բառի հապավույթն է): Այս բացառիկ հապավույթը առաջին հերթին ունի իմաստաբանական-տեմատիկական հիմունք. արդարադատություն բառի (մանավանդ արդարադատության մի-նիստություն բաղադրյալ անվանման մեջ) հիմնականն է երկրորդ բաղադրի-չը ոչ միայն նրանով, որ իբրև բարդության երկրորդ բաղադրիչ նա է գլխավոր

անդամը (լրացյալը), այլև նրանով, որ նա է տերմինաբանական իմաստի, հետևաբար՝ նաև տերմինի, մասնավորման կրողը (հմմտ. արդարամիտ, արդարախոս բառերը, որոնք զուրկ են տերմինաբանական մասնավորումից)։ Նույնպիսի հիմունք կարելի կլիներ վերագրել նաև դյուդաճան՝ հապավույթին, որը, ինչպես ասացինք, ռուսերենի СЭПХОЗ հապավույթի պատճենումն է, ուստի և իմաստաբանական հիմունքը առաջին հերթին ռուսերենին է վերաբերում։ Վերջապես, երրորդը, որ այժմ գործածվում է միայն զինկոմատ հապավական բաղադրության մեջ, ռուսերենից փոխառյալ հապավույթ է (հմմտ. военком = զինկոմ, военкомат = զինկոմատ, нарком = ժողկոմ, наркомат = ժողկոմատ)։ սակայն ռուսերենում բաղադրյալ անվանումների անդամների շարադասության և դրանով պայմանավորված՝ հապավական բաղադրությունների մեջ հապավույթների հաջորդականության յուրահատկության պատճառով комат հապավույթը միայն հիշյալ երկու հապավումների մեջ էր հանդիպում և իմաստային տարբերակումը վերանում էր բոլոր այն դեպքերում, երբ հապավական բաղադրության մեջ այդ հապավույթը վերջին բաղադրիչը չէր լինում (օրինակ՝ наркомпрос, наркомводхоз, որոնց համապատասխան հակադրությունները կազմող *наркоматпрос, *наркоматводхоз, հապավումները չկային և չէին կարող լինել, որովհետև комат-ը հապավումների միայն վերջին բաղադրիչ էր)։ տարբերակումը պահպանելու համար դիմում էին բառակապակցական կամ վերլուծական հապավումների օգնության, այսինքն՝ ժողկոմատների համար օգտագործում էին բառային հապավումները (наркомпрос = լուսժողկոմատ, наркомводхоз = ջրատնտժողկոմատ և այլն), իսկ ժողկոմի համար՝ բառակապակցական հապավումները (нарком просвещения = լուսժողկոմ, нарком земледелия = հողժողկոմ և այլն)։ Հայերենը, վերցնելով այդ երկու հապավույթները, իր շարադասությամբ հնարավորություն ունեցավ այդ երկուսի հակադրությունը պահպանել բոլոր դեպքերում, քանի որ բաղադրյալ անվանումների մեջ կոմիսար և կոմիսարիատ բառերը վերջին անգամն էին (հմմտ. լուսժողկոմ—լուսժողկոմատ, հողժողկոմ—հողժողկոմատ և այլն)։

Վերը բերված կանոնները ցույց են տալիս, որ հայերենի վանկային հապավույթների կազմությունը ճշտորեն համընկնում է հայերենի փակ վանկերի կառուցվածքին, իսկ սա նշանակում է, թե հայերենի վանկային հապավույթների կազմության համար իբրև հիմնական սկզբունք է ծառայում հայերենի վանկակազմությունը և ոչ թե համառոտագրությունը, թեև, իհարկե, ինչպես ասվել է, անժխտելի է հապավումների կապը, ավելին՝ ծագումն ու զարգացումը համառոտագրություններից։ Սակայն ծագելով համառոտագրությունների հիմքի վրա, հապավումը, մասնավորապես վանկային հապավույթների կազմության մեջ, իբրև հենարան է ունեցել (և ունի) վանկակազմությունը։ Բանն այն է, որ համառոտագրությունների մեջ վանկ կազմող գրությունները ազատորեն շեղվում են վանկակազմության կանոններից, ինչպես՝ Աբգ. (Աբդիու), Պետր. (Պետրոս), Անյ. (Անյաղթ = Անհաղթ), Եբր. (Եբրայեցի), Նփր. (Նփրեմ) և այլն։

Հատվածական հապավույթները անանցավոր և բարդանցավոր բառերի կամ բառերի փոխանակման ձևերի այնպիսի հապաված մասեր են, որոնք նույնանում են իբրև անկախ բառ գործածվող բաղադրական հիմքի ուղիղ ձևի հետ, ինչպես՝ գյուղամիստություն (գյուղատնտեսության միստություն), անտառտնտեսություն (անտառային տնտեսություն), պտուղբանջարառ (պտղեղենի կամ պտուղների և բանջարեղենի առևտրի վարչություն), գործարհկոմ

(դորձարանալին արհեստակցական միության կոմիտե), Երհագուստառ (Երեմիայի հաղուստեղենի առևտրի վարչություն): Այս հայավական բաղադրությունների գյուղ-, պտուղ-, բանջար-, հսագուստ-, անտառ-, գործ- բաղադրիչները գյուղատնտեսության, անտառային, բանջարեղենի, պտուղների (կամ պտղեղենի), գործարանային, հագուստեղենի բառերի հայավություններն են, որոնք համընկնում են գյուղ, անտառ, պտուղ, բանջար, գործ, հագուստ բառերին: Այդ կարգի հայավությունների կազմությունը նույնանում է հատվածական բաղադրությունների հիմքերի (հատվածական հիմքերի) կազմությանը, այն տարբերությամբ, որ՝ ա) հատվածական հիմքերը պահպանում են հոդակապը, իսկ հատվածական հայավությունները՝ ոչ, բ) հատվածական հիմքերի ձայնավորները ենթարկվում են շեշտադրական հնչյունադրության, հատվածական հայավություններին՝ ոչ (հմմտ. պտղաբանջարաբուծական և պտուղբանջարառ): Մյուս կողմից, դրանք բառակերպ հայավություններ են, որովհետև բաղադրությունների (ածանցումների, բարդությունների, բառաձևերի) հիմքերը լինելով՝ նույնանում են համապատասխան բառերին (հմմտ. գյուղ, անտառ բառերը և գյուղ- գյուղական, գյուղատնտեսական), անտառ- (անտառային) հայավությունները):

Հայավական բաղադրությունները կազմվում են հայավությունների զանազան համակցություններով: Այսպես, ՀՍՍՀ հայավական բաղադրությունը կազմվել է տառային հայավություններից, ՀԿԿ Կենտկոմ՝ տառային և վանկային հայավություններից, Ծոզկրթբաժին՝ վանկային հայավություններից ու ամբողջական բառից: Հեշտությամբ կարելի է տեսնել, որ բերված օրինակներում ոչ միայն հայավություններն են տարբեր տեսակի, այլև հայավությունների համակցությունները: Ըստ հայավությունների տարբեր համակցությունների հայավական բաղադրությունները լինում են հինգ տեսակի:

1. Տառային, ինչպես՝ ՍՄԿԿ, ՄԱԿ, ՀՍՍՀ, ԼԿԵՄ, հօպ, բուհ, պապ և այլն: Միայն բաղաձայններից կազմված տառային հայավումների բոլոր բաղադրիչները արտասանվում են ը հենարանով, ինչպես՝ ՍըՄըԿըԿը, ՀըՄըՄըՀը և այլն: Ձայնավոր ունեցող տառային հայավումների մեջ բաղաձայնների համար հենարան է դառնում ձայնավոր հայավությունը, ուստի և նրանք արտասանվում են առանց ը հենարանի, ինչպես՝ ջէկ (ջերմային էլեկտրակայան), հօպ (հակաօդային պաշտպանություն), պապ (պատրաստ աշխատանքի և պաշտպանության), բուհ (բարձրագույն ուսումնական հաստատություն) և այլն: Եթե տառային հայավությունների սկզբում, ձայնավորից առաջ կան մի քանի բաղաձայն հայավություններ, ապա նրանք ստանում են ը հենարանը, բացի ձայնավորին անմիջապես նախորդողից, ինչպես՝ լըկըլեմ. վերջապես ը ձայնավոր հենարանով է արտասանվում նաև այն դեպքում, երբ ձայնավորին հաջորդում է մեկից ավելի բաղաձայն, ինչպես՝ ՈՐՖ—որակի բարձրացման ֆակուլտետ (արտասանվում է ՎՕՐԸՖԸ), ԱՌԿ—աշխատանքային ռեզերվների կոմիտե (արտասանվում է ԱՌԸԿԸ) և այլն: Ե և Ո տառերով սկսվող բառերի հայավությունները տառային են գրային տեսակետից, վանկային՝ արտասանությամբ, ինչպես՝ ԼԿԵՄ (արտասանվում է լըկըլեմ, որի մեջ Ե տառային հայավություն արտասանվում է որպես վանկային՝ յե), ՈՐՖ (արտասանվում է ՎՕՐԸՖԸ) և այլն՝ տառային:

7 Այժմ ավելի սովորական է դառնում լրկել արտասանությունը:

2. Վանկատառային, ինչպես՝ ՀամԼԿԵՄ (առաջին հապավույթն է Համ—Համամիութենական), ՀայԳՏ (Հայաստանի «Հայգյուտեխնիկա» միավորում), գործածությունից դուրս եկած՝ պաշք (պաշտպանության աջակցության ընկերություն. երկրորդ հապավույթն է աջ—աջակցություն), ջրէկ—ջրային էլեկտրակայան (առաջին հապավույթն է ջր—ջրային) և այլն:

3. Վանկային, ինչպես՝ աշխղեկ (աշխատանքի ղեկավար), գործկոմ (գործարանային կոմիտե), կուսկոմ (կուսակցական կոմիտե), պարտուս (պարտադիր ուսում՝ ուսուցում), ժողկրթաժվար (ժողովրդական կրթության բաժնի վարիչ) և այլն:

4. Վանկաբառային, ինչպես՝ պետհամալսարան (պետական համալսարան), ժողկրթաժին (ժողովրդական կրթության բաժին), պետբանկ (պետական բանկ), քաղսովետ (քաղաքային սովետ), միլբաժին (միլիցիայի բաժին), ժողդատարան (ժողովրդական դատարան) և այլն:

5. Խառն համակցություններ (զանազան տիպերի համակցությունների զուգորդություններ միմյանց հետ և բառերի հետ), ինչպես՝ ԵՊՀ ԳՀՍ (Երևանի պետական համալսարանի գիտահետազոտական սեկտոր), ՀԿԿ Կենտկոմ, ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրո, ՀՍՍՀ ԳԱ նախագահություն, շրջսովետի բնակբաժին, ՀամԼԿԵՄ և այլն: Այս կարգի համակցություններով կազմվում են վերլուծական հապավական բաղադրություններ, որոնց մասին կիսովի ստորև:

Առանձին ուղադրության են արժանի այնպիսի համակցություններ, ինչպիսիք են Սեանգէսշին, Տաթեգէսշին, Հայբուխտրն, շրջագաբաժվար, շրջագաբաժին և այլն: Սրանց յուրահատկությունն այն է, որ բաղադրիչներից մեկը (բուհ, գէս, զագս) տառային հապավույթներից կազմված հապավում է, մյուսները՝ վանկային հապավույթներ կամ բառ: Այս հապավումները ոմանք համարում են խառն տիպի հապավումներ, գտնելով, որ դրանք ներկայացնում են վանկային հապավույթներ+տառային հապավույթներ+վանկային հապավույթներ համակցություն, սակայն իրականում այդպես չէ: Բերված համակցությունների մեջ գէս, բուհ, զագս բաղադրիչները, կազմված լինելով տառային հապավույթներից, վերածվել են սովորական բառերի և մտել են այդ համակցությունների մեջ որպես հատվածական հապավույթներ: Հայբուհ—խտրն հապավական բաղադրությունն է Հայաստանի բուհերի (ուսումնական) խտրնուդ բաղադրյալ անվան. այդ հապավական բաղադրության մեջ ունենք բուհ հատվածական հապավույթ, և ոչ թե Բ, Ու, Հ տառային հապավույթների համակցություն: Նույնպես և՛ Տաթեգէսշին, շրջագաբաժվար, շրջագաբաժին համակցությունների մեջ գէս, զագս բաղադրիչները գէսի, զագսի բառաձևերի հատվածական հապավույթներն են, ինչպիսիք են, ասենք, վերը բերված բանջար, պտուղ հատվածական հապավույթները Երպտուղբանջարառ հապավական բաղադրության մեջ: Սրա ապացույցն է այն, որ զագս և գէս բառերը հայերենի համար հապավական բաղադրություններ չեն, այլ փոխառյալ բառեր (հապավումներ են ռուսերենում և ռուսերենի համար) և իբրև այդպիսին էլ մտնում են զանազան կարգի բաղադրությունների մեջ:

Հապավույթների տարբեր տեսակների զանազան համակցություններով ուղամանավորվում են նաև հապավական բաղադրությունների, որպես բառային միավորների, տարբեր տեսակները: Այսպես. ՊԲՀ (Պատմա-բանասիրական հանդես), ՀՍԳՄ (Հայաստանի սովետական գրողների միություն), ժողկրթաժին, Հայկական ՍՍՀ, ՍՍՀ Միություն, ԳԱ (գիտությունների ակա-

դեմիա), բուն հավասարապես հապավական բաղադրություններ կամ պար-
զապես հապավումներ են, բայց որպես բաղադրություն դրանք միմյանցից
տարբեր են. ժողկրթաժին, գործկամ, բուն հապավումները բառեր են, Հայ-
կական ՍՍՀ, ՍՍՀ Միություն՝ բառի և հապավման կապակցություն, իսկ ՀՍԳՄ
և ԳԱ՝ տառային հապավումների միավորում: Այդ տարբերությունները հիմք
ընդունելով՝ հապավական բաղադրությունները կարելի է բաժանել երեք տե-
սակի կամ տիպի:

1. Սիմվոլային հապավումներ.— Բոլոր բաղաձայնական տառային հա-
պավումներով կազմված, ինչպես և՛ մի քանի բաղաձայն հապավումներից
ու միայն մեկ ձայնավորից բաղկացած հապավական բաղադրությունները,
ինչպես՝ ՊԲՀ, ՀՍԳՄ, ՍՄԿԿ, ՈՐՖ, ԲՇԳ և այլն: Այս կարգի հապավական բա-
ղադրությունները կարելի է համեմատել քիմիական սիմվոլային բանաձևերի
հետ. օրինակ՝ H_2O բանաձևը սիմվոլ է ծառայում ջուր բառի, թեև ներկայաց-
նում է ջրի քիմիական բաղադրությունը: Այդպես են նաև բաղաձայնական
տառային հապավումներից կազմված հապավումները, որոնք հենց սիմվոլ-
ներով ներկայացնում են բաղադրյալ անվանումը, ըստ որում միևնույն տա-
ռային հապավումը, այսինքն՝ միևնույն տառը կարող է հանդես գալ որպես
զանազան բառերի սիմվոլ (համտ. ՍՄԿԿ, որի մեջ երկու Կ-երը տարբեր բա-
ռեր են ներկայացնում): Իբրև կանոն. սիմվոլային հապավումները կարգաց-
վում են բաղադրիչների վերականգնումով՝ ամբողջական բառերով, բացի շատ
գործածական և դրանով իսկ շատ սովորական դարձած փոքրաթիվ սիմվոլա-
յին հապավումներից, ինչպես՝ ՍՄԿԿ, ՀՍՍՀ, ՍՍՀՄ և այլն, թեև դրանց այդ-
պիսի ընթերցումն էլ չի հանձնարարվում:

2. Բառային հապավական բաղադրություններ կամ բառային հապավում-
ներ.— Այն բոլոր հապավական բաղադրությունները, որոնք գրվում են և ար-
տասանվում որպես մեկ բառ, անկախ իրենց հապավումների բնույթից ինչ-
պես՝ բուն, ջէկ, պապ, ՄԱԿ, գործկամ, ժողկրթաժվաբ, կոլտնտեսություն,
պտուղբանջարառ, շինվարչություն, պետքանկ և այլն: Այս հապավումներից
մի քանիսը տառային հապավումներ ունեն (ջէկ, պապ, ՄԱԿ, բուհ), մի քա-
նիսը՝ վանկային (գործկամ, ժողկրթաժվաբ), մյուսները վանկային կամ
հատվածական հապավումներ, որոնց միացել են ամբողջական բառեր (կոլ-
տնտեսություն, շինվարչություն, պետքանկ և այլն), բայց չնայած դրան, բո-
լորն էլ բնութագրվում են մեկ ընդհանուր հատկանիշով՝ բոլորն էլ բառեր են:
Կարելի է, այնուամենայնիվ, դրանք էլ ստորաբաժանել երկու տեսակ. բառա-
կերպ հապավումներ (բուհ, ջէկ, ՄԱԿ, պապ) և հապավական բաղադրություններ
(գործկամ, ժողկրթաժվաբ, պտուղբանջարառ, կոլտնտեսություն, շինվարչու-
թյուն, պետքանկ): Բաղադրությունների վերլուծական և համադրական անվա-
նումները տարածելով նաև հապավումների վրա, այս կարգի հապավումները
կարելի է կոչել համադրական հապավումներ, ի հակադրություն հաջորդ կար-
գի հապավական բաղադրությունների:

3. Բառակապակցական կամ վերլուծական (անալիտիկ) հապավում-
ներ.— Այն բոլոր բաղադրյալ հապավումները, որոնք ներկայացնում են.
ա) Երկու տարբեր սիմվոլային հապավումների, որպես մեկ բաղադրյալ ան-
վան, կապակցություն, ինչպես՝ ՀՍՍՀ ԳԱ, ԵՊՀ ՀԿ (Երևանի պետական հա-
մալսարանի հաշվողական կենտրոն) և այլն: Բ) Սիմվոլային և բառային հա-
պավումների կապակցում, ինչպես՝ ՍՄԿԿ Կենտկոմ, ՀՍՍՀ պետքանկ, ՍՍՀՄ

պետական, ՀԿԿ Նրբադիմում և այլն: Գ) Սիմվոլային հապավման (հապավումների) կապակցություն չհապավված բառերի հետ, ինչպես՝ Հայկական ՍՍՀ, ՀՍՍՀ ԳԱ նախագահություն, ՍՍՀՄ Գերագույն սովետ, ՀՍԳՄ վարչություն և այլն: Դ) Բառային հապավումների կապակցություն չհապավված բառերի հետ, ինչպես՝ Երևանի գործադիր կոմիտե, շրջկոմի բյուրո, պետքանկի կառավարություն, բանակի նրամկազմ և այլն:

Բառակապակցական հապավումների ընդհանուր հատկանիշն է այն, որ որանք բաղկացած են երկու կամ ավելի միմյանցից անջատված, առանձին-առանձին գրվող և արտասանվող մասերից կամ բաղադրիչներից, որոնք, անկախ իրենց բնույթից (չհապավված բառ, սիմվոլային հապավում և այլն), միմյանց հետ կապակցվում են և ստեղծում բաղադրյալ անուններ: Այսպես, օրինակ, ՀՍՍՀ ԳԱ կազմված է երկու բաղադրիչներից (երկուսն էլ սիմվոլային հապավումներ), որոնք դրվում են իրարից անջատված, որովհետև դրանցից յուրաքանչյուրը մի ինքնուրույն բաղադրյալ անվան հապավումն է (Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն և գիտությունների ակադեմիա), և ինչպես չհապավված բաղադրյալ անունների, այնպես էլ դրանց հապավումների կապակցությամբ ստեղծվում է մի նոր բաղադրյալ անվանում (Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության գիտությունների ակադեմիա—ՀՍՍՀ ԳԱ): Ճիշտ այդպես էլ բառակապակցական (վերլուծական) հապավումների մյուս տեսակները ներկայացնում են բաղադրյալ անուններ կազմող հապավական կապակցություններ՝ առնվազն երկու ինքնուրույն բաղադրյալ անվանումների միավորումով (հմմտ. Գերագույն սովետ, բայց՝ ՍՍՀՄ Գերագույն սովետ, ՀՍՍՀ Գերագույն սովետ և այլն):

Բառային և բառակապակցական հապավումների մեջ կարող են բաց թողնվել բաղադրյալ անվան մեկ կամ մի քանի բաղադրիչներ՝ հապավումը «բեռնաթափելու», համեմատաբար կարճացնելու նպատակով: Այսպես՝ արհեստակցական միության կոմիտե բաղադրյալ անվան հապավումն է արհկոմ, որի մեջ զեղչվել է միություն բառը.— (ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի) հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և դրժի առևտրի գործերի կոմիտե—հրատպետկոմ (հապավումը կազմվել է միայն երեք բառից).— (ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի) պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության պետական կոմիտե—պրոֆտեխպետկոմ, (ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի) պետական պլանային կոմիտե—պետպլան և այլն: Այսպիսի հապավումները, որոնք ակադ. Գ. Սեվակը անվանել է կրկնաճապավումներ կամ զեղչվումով ճապավումներ, հաճախ բաղադրյալ անվանումների այնքան կրճատ հապավումն են ներկայացնում, որ դժվար է լինում հապավումների լրիվ բառերով փոխարինելիս ամբողջական բաղադրյալ անվանումը իմանալ (հմմտ. պետպլան, հրատպետկոմ, գյուղտեխնիկա և այլն): Այս կարգի հապավումները, վերացարկվելով իրենց ամբողջական բաղադրյալ անվանումից, ժամանակի ընթացքում կարող են վերածվել հատուկ անունների, ինչպես՝ «Գյուղտեխնիկա» միավորում, «Սննդառի» խանութ, «Քիմարդ» կոմբինատ և այլն:

Հապավական բաղադրությունների կարևորագույն բնութագրերից մեկը նրանց գործածականությունն է: Ընդունված է ասել, թե հապավումները դրային ծագում ունեն, այսինքն՝ ամեն մի հապավում նախապես երևան է գալիս գրավոր խոսքում: Սա, իհարկե, իբրև ընդհանուր կանոն, ճշմարիտ է, թեև չի բացառվում նաև բանավոր խոսքում առաջացած հապավումների գոյություն:

հնադավորությունը (օրինակ՝ խժբ -- «խնամի, ծանոթ, բարեկամ»)։ Սակայն կարևոր հանգամանք է նաև այն, թե ինչպիսի գործածություն ունեն հայավումները բանավոր խոսքում, ինչպես և գրավոր խոսքի տարբեր ոլորտներում (աարբեր լեզվաոճերում)։ Այդ տեսանկյունով բոլոր հասարակական բաղադրությունները կարելի է բաժանել երկու շերտի՝ համագործածական հայավումներ և տերմինային-զբաղմունքային հայավումներ։

Համագործածական հայավումների շերտին են պատկանում բոլոր այն հասարակական բաղադրությունները, որոնք, ինչպես շեղոք շերտի բառերը, գործածվում են բոլորի կողմից՝ սովորական խոսքային իրադրության մեջ, առօրեական խոսքում (թե՛ գրավոր և թե՛ բանավոր), ինչպես՝ քաղսովետ, շրջկոմ, Կենտկոմ, ՀԱՄԿ, կոլտնտեսություն, աշխղեկ, տնտհաշվարկ, բուհ, առբաժին, ՍՍՀՄ, ՀԼԿԵՄ, սոցապ, սլետապ, սոցմրցում, քաղպարապմունք, զինկոմ, պետավտոտեսչություն, կուսանգամ, արհկոմ, տեղկոմ, գործկոմ և այլն։

Տերմինային-զբաղմունքային շերտին են պատկանում այն հասարակական բաղադրությունները, որոնք գործածվում են գիտության, տեխնիկայի, արտագործության, զբաղմունքի տվյալ բնագավառում և սովորաբար այդ բնագավառի հետ շփում չունեցող մարդկանց համար ոչ միայն անգործածական, այլև շատ հաճախ անհասկանալի են, ինչպես՝ ԳՀՍ (գիտահետազոտական սեկտոր), ԽՀԽ (խմբագրական-հրատարակչական խորհուրդ), Ուժարչություն (ուսումնական վարչություն), ՊՔՀ (պետական քննական հանձնաժողով), ՇՆՄ (շարահյուսական նվազագույն միավոր), քօր (քրեական օրենսգիրք) և այլն։ Այս կարգի հայավումները, որոնք մեծ մասամբ սիմվոլային հայավումներ են, գործածվում են տվյալ ճյուղի գիտական ու գործարարական գրականության, զեկուցումների, հաշվետվությունների և նման գրավոր վավերագրերի մեջ, ինչպես և բանավոր խոսքում՝ աշխատանքային գործունեության ընթացքում։

Գործառական տեսակետից ավելի կարևոր է այն, թե ի՞նչ դեր ունեն հայավումները գեղարվեստական խոսքի մեջ։ Թեև այս խնդիրն առայժմ ուսումնասիրված չէ հանգամանորեն, բայց և այնպես կարելի է հետևյալ ընդհանուր իրողությունն արձանագրել։ Գեղարվեստական գրականության մեջ սովորական գործածություն ունեն բառային և բառակապակցական հայավումները (աշխղեկ, առբաժին, քաղկոմ, շրջկոմ, սոցմրցում, կոլտնտեսություն, ՀՍՍՀ Գերագույն սովետ, ՍՍՀՄ կառավարություն և այլն) և խիստ սահմանափակ գործածություն՝ սիմվոլային հայավումները, մանավանդ՝ չափածոյի մեջ։

Ինչպես բառերը, այնպես էլ հասարակական բաղադրությունները կարող են փոխառվել։ Ժամանակակից Հայերենի համար որպես հայավումների փոխառության աղբյուր է ծառայում ռուսերենը։

Փոխառյալ հայավումները կարելի է բաժանել երկու կարգի. ռուսերեն հայավումներ և օտարալեզու հայավումներ, որոնք, ինչպես և միջնորդական բառային փոխառությունները, հայերենին են անցնում սովորաբար դարձյալ ռուսերենի միջնորդությամբ։ Ռուսերեն փոխառություններ են, օրինակ, նէպ (новая экономическая политика), գագա (запись актов пражданского состояния), շեկա (чрезвычайная комиссия), գէս (гидро-электрическая станция), սովխոզ (советское хозяйство), ՏԱՍՍ (Телеграфное агентство)։

Советского Союза), ГОСУУСБ (Всесоюзное добровольное общество содействия армии, авиации и флоту СССР) և այլն:

Ռուսերենի միջոցով փոխառված օտարալեզու հապավումներն են.

ՈՒԵՖԱ UEFA--Ֆրանս. Union européenne de football-associations—

Ֆուտբոլային ասոցիացիաների եվրոպական միություն

ՅՈՒՆԵՍԿՈ (UNESCO)—անգլ. United Nations Educational, Scientific and Cultural Organization—Միավորված ազգերի՝ կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն

ՆԱՏՕ (NATO)—անգլ. North Atlantic Treaty Organization—Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն

ՖԻՖԱ (FIFA)—ֆրանս. Fédération internationale de football associations—Ֆուտբոլային ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա

ՖԻԴԵ (FIDE)—ֆրանս. Fédération internationale des échecs—Շախմատի միջազգային ֆեդերացիա:

Հապավումներին նվիրված ուսումնասիրությունների մեջ խոսվում է նաև հապավումների պատճենումների մասին, ըստ որում պատճենումների օրինակներ են համարվում այնպիսիները, ինչպիսիք են, շրջկոմ (райком), պետբանկ (госбанк), ՍՍՀՄ—СССР և նման հասլավական բաղադրությունները: Դրանք սովորական հապավումներ են և ոչնչով չեն պայմանավորվում ռուսերենի համանման հապավումներով: Պատճենում կարելի է համարել, բերված օրինակներում, ոչ թե հապավումները, այլ դրանց համապատասխան չհապավված բաղադրյալ անունները, որոնք սովորաբար կաղմվում են ռուսերեն բաղադրյալ անվանումների թարգմանությամբ (պատճենումով): Հապավումների պատճենում կարելի է համարել այնպիսի հապավումները, որոնք բաղադրյալ անունների զեղչումներով ընդօրինակում են ռուսերենի հապավումները, ինչպես՝ պետպլան, որ պատճենումն է ռուսերեն госплан հապավման, որովհետև հապավման մեջ զեղչված անդամները և հապավման համար պահանջվածները համընկնում են իրար, ըստ որում հայերենը հետևում է ռուսերենին. ռուսերենից անկախ լինելու դեպքում հայերենում կարող էր կազմվել, ասենք, պլանպետկոմ կամ պլանկոմ կամ պետպլանկոմ. այդպիսի պատճենումներ են՝ հրատպետկոմ, պետգրքառ, գյուղտնտիկտնտեսություն, որոնք պատճենված են ռուսերենի госхозмздат, госкниготорг, сельхозмнстатут հապավումներից. հատկապես վերջին օրինակն այդ տեսակետից շատ ցայտուն է, որովհետև ունենք շատ սովորական և ոչ պատճենված գյուղինտեսություն հայկական հապավումը (հմմտ. գյուղտնտիկություն, գյուղմինիստրություն և այլն):

Փոխառյալ հապավումները հայերենում հանդես են գալիս որպես սլարգ բառեր. այլ կերպ ասած, զագս, լավսան, լագեր և այլն հայերենի համար այլևս հապավումներ չեն, այլ սովորական փոխառյալ բառեր, ինչպիսիք են, ասենք, սովետ, կոմբայն, տրակտոր և այլն: Բացառություն են կազմում այնպիսի փոխառյալ հապավումները, որոնց համապատասխան բառերը իբրև փոխառյալ բառեր նույնպես գործածվում են հայերենում, որ և հիմք է դառնում փոխառյալ հապավման դիտակցման, ինչպես՝ դիամատ (դիալեկտիկական մատերիալիզմ), մուլտֆիլմ (մուլտիպլիկացիոն ֆիլմ) և այլն:

Վերը բերված փոխառյալ հապավական բաղադրությունները, որոնք իսկական փոխառություններ կարելի է համարել, պետք է տարբերել բանավոր

խոսքում իրրև ուսաբանություն գործածվող Յեկա, Սովմին, Ռայկոմ, պոլիտ-բուրժուա, գլենսեկ, կապեկսէս և նմաններից: Այդ հապավումների գործածու-թյունը, որ հատուկ է միմիայն բանավոր խոսքին, նույնքան խոտելի ու մեր-ժելի է, որքան ռեմեն, խալադիլենիկ, պրիշուսկա, ռեմոնտ, մաստ և նման բա-ռերի գործածությունը ժառգոնստիպ հայերեն խոսքի մեջ, ինչ վերաբերում է մեր լեզվի մեջ արմատավորված զագս, նէպ, լավսան, լագեր, Ֆիդե, Ֆիֆա, ՂՕՍՍԱՅ և նման հապավումներին, ապա դրանք իրոք մեր լեզվի սեփակա-նությունը դարձած, մեր բառապաշարը հարստացնող փոխառություններ են:

Հապավական բաղադրությունների համակարգում ուսերենի ազդեցու-թյունն ավելի ուժեղ է հապավումների տիպերի կամ «կաղապարների» տեսա-կետից: Պետական և կուսակցական մարմինների, արտադրական ձեռնարկու-թյունների, զանազան հաստատությունների, հասարակական կազմակերպու-թյունների, ընկերությունների և այլնի բաղադրյալ անվանումների և գիտա-տեխնիկական տերմինների, մանավանդ բաղադրյալ տերմինների, աղբյուրը ՍՍՀՄ ժողովուրդների լեզուների համար սովորաբար ուսերենն է: Դրա հետե-վանքն է այն, որ ինչպես ուրիշ լեզուներում, այնպես էլ հայերենում այդ կարգի բաղադրյալ անվանումներն ու տերմինները կամ ուսերեն համապա-տասխանի ուղղակի թարգմանությունն է (պատճենում) կամ էլ՝ փոխառումը: Քանի որ այդ կարգի բաղադրությունները մեծ մասամբ վերածվում են հա-ղավական բաղադրությունների, ապա բաղադրյալ անվան կամ տերմինի պատճենման հետ պատճենվում է նաև հապավման տեսակը կամ կաղապա-րը, այսինքն՝ եթե ուսերենը տվյալ բաղադրյալ անվան կամ տերմինի հա-մար ստեղծել է սիմվոլային հապավում, հայերենն էլ նույն տիպի հապա-վում է ստեղծում, եթե բառային հապավում է ստեղծել, ապա հայերենն էլ նույնն է անում, ինչպես՝ КПСС—ՍՄԿԿ, ГЭС—հէկ, ТЭЦ—շէկ, местком—տեղկոմ, профком—արհկոմ, эльсеть—էլցանց, политбюро—բաղբյուրո, և այլն: Այսպիսի զուգահեռները այնքան շատ են, որ թվում է, թե առհասա-րակ հայերենն իր հապավումների տիպերի ընտրության մեջ լոկ ընդօրինա-կում կամ պատճենում է ուսական հապավումների տիպերը: Իրականում, սակայն, այդպես չէ. հայերենն իրոք պատճենում է, բայց այն չափով, որչա-փով դրա անհրաժեշտությունն զգացվում է և որչափով թույլատրում են հա-պավական բաղադրությունների կազմության հայերենին հատուկ օրինաչա-փությունները, ուստի և բոլոր այն դեպքերում, երբ պատճենումը որևէ բանով կարող է խախտել հայերենի օրինաչափությունները, հրաժարվում է պատ-ճենումից և ստեղծում յուրահատուկ սեփական հապավումը: Այսպես, օրի-նակ, ուսերենն ունի народобраз (народное образование) հապավումը, որ ներկայացնում է նաև Отдел народного образования բաղադրյալ անվան հապավումը (գերկնահապավումը) և շատ սովորական գործածություն ունի բանավոր խոսքում: Հայերենում, պատճենելու դեպքում, պետք է ունենայինք ժողկրթ (ժողովրդական կրթություն) հապավումը, ոսկայն հայերենի համար սովորական չէ վերջում միայն գաղտնավանկ ը-ով հապավույթ ունեցող հա-պավումը, ուստի և ոսենք՝ ժողկրթություն, մինչդեռ «ժողովրդական կրթու-թյան բաժին» անվանումի համար ունենանք ժուկրթբաժին.—նույն պատ-ճառով էլ ուս. КОЛХОЗ-ի դիմաց հայերենն ունի կոլտնտեսություն, բայց նաև՝ կոլտնտավաշություն, որի մեջ տնտեսություն բառն արդեն բաղադրության վերջում չէ, ուստի և հանդես է եկել անտ- հապավույթով: Ինքնուրույն և ինք-

նատիպ հապավումներ են նաև՝ կենտրոն (ռուսերենը շունի центрком), կոմկուս (ռուսերենն ունի компартия, որի համապատասխան հայերենն է կոմկուսանություն), կենտրոնություն (ռուսերենը շունի центрпрвление) և այլն. և այլն:

Վերջապես, փոխառվել կարող են նաև հապավույթներ. եթե համապատասխան փոխառյալ բառը դորժածվում է մեր լեզվում. այդպիսիք են. դիա- (դիալեկտիկական) հապավույթը դիամատ հասկացման մեջ, մուլտֆիլմ. բիո-ֆակ (բիոգրֆական ֆակուլտետ) հապավույթները, որոնք, սակայն, միայն խոսակցական լեզվում են գործածվում (բացի դիամատ-ից): Սակայն այս վերջինում էլ հայերենի համար դիա- և բիո- ոչ թե հապավույթներ, այլ բարոյությունների փոխառյալ բաղադրիչներ (բաղադրական հիմքեր) պետք է համարել, ինչպիսիք են նաև՝ միկրո, մակրո, սեյսմո (նաև՝ սեյսմա), ագրո-ավո, ագիտ- և այլն, և այլն:

АББРЕВИАТУРЫ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ЭДУАРД АГАЯН

Член-корр. АН Арм. ССР

Резюме

На современном этапе развития языков образование аббревиатур представляется очень продуктивным процессом. Не случайно поэтому пристальное внимание к аббревиатурам как в чисто лингвистическом, так и в прикладном (составление словарей, списков, справочников и т. д.) аспектах.

В современном армянском языке аббревиатуры, на наш взгляд, необходимо изучать, во-первых, с точки зрения возможных сокращений слов; как единицы, составляющие сложно-сокращенные слова, эти части мы называем аббревиемами; во-вторых, с точки зрения возможных комбинаций аббревием для образования аббревиатур; в-третьих, с точки зрения видов аббревиатур как результат этих комбинаций.

В современном армянском языке аббревиемы делятся на три вида: а) буквенные, б) слоговые, в) усеченные. Возможны следующие комбинации: 1) сочетание буквенных аббревием, 2) сочетание слоговых аббревием, 3) сочетание слоговых аббревием со словами, 4) сочетание усеченных со слоговыми или со словами и, наконец, 5) сочетание уже полученных предыдущими комбинациями сложпосокращенных слов друг с другом или со словами или словосочетаниями.